Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Վարչական բողոքը մասնակի բավարարելու, Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.04.2021թ. թիվ 2112591137 որոշումն անփոփոխ թողնելու, իսկ 19.04.2021թ. թիվ 2112591141 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին

<<28>> 04 2021թ. 7-13- 6856 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արտակ Թարխանյանի ՄԴ/34130-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կիլիկիա փողոցի 4-րդ շենքի 4-րդ բնակարանի բնակիչ Արտակ Թարխանյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության կողմից կայացված վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112591137 և 2112591141 որոշումներից մեկը՝ նշելով, որ նույն իրավախախտման համար կայացվել է երկու տարբեր որոշումներ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի խնդրանքը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վիճարկվող որոշումների հիմքում դրված տեսանյութերը փաստում են, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 02.04.2021թ-ին ժամը 13:49-ին Երևան քաղաքի Ազատության-Ն.Զարյան-Ա.Տիգրանյան փողոցների խաչմերուկի հատվածում վազանց է կատարել «Վազանցն արգելվում է» ճանապարհային նշանի ազդման գոտում, ինչը արձանագրվում է և կայացվում է 19.04.2021թ. թիվ 2112591137 որոշումը և նույն օրը ժամը 13:49-ին նույն իրավախախտման համար կայացվում է 19.04.2021թ. թիվ 2112591141 որոշումը:

Այսպիսով, վարչական վարույթի ընթացքում հիմնավորվել է, որ դիմումատուն նույն իրավախախտման համար կրկնակի անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության, որ թիվ 2112591141 որոշումով դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելը տեխնիկական վրիպակի արդյունք է, հետևաբար վերը նշված որոշումը ենթակա է բեկանման:

Նկատի ունենալով, որ նշված վայրում իրավախախտում կատարելու համար դիմումատուն Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112591137 որոշմամբ արդեն իսկ ենթարկվել է վարչական պատասխանատվության և ղեկավարվելով

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.04.2021թ. թիվ 2112591141 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.04.2021թ. թիվ 2112591137 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ դրան վերաբերող մասով, առանց բավարարման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Արտակ Թարխանյանին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Է.Հովհաննիսյան
Հեռ. 011544783